

Luys Lnyu®



ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ
ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ ԱՄԻՍՆԵՐԻՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ	1
1.1. Արդյունաբերություն	3
1.2. Շինարարություն	4
1.3. Ծառայություններ	4
1.4. Առևտուր	5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ	6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ	8
4. ՓՈԽԱՐԺԵՔ	8
5. ՀԱՐԿԱՔՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ	9
5.1. Բյուջեի եկամուտները	9
5.2. Բյուջեի ծախսերը	11
5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը	12
5.4. Պետական պարտք	12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ	13
6.1. Գնաճ	13
6.2. Ավանդներ և վարկեր	14
7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	16
8. ԱՄՓՈՓՈՒՄ	17

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

Ինչպես և սպասվում էր, 2021 թվականին տնտեսական ակտիվության ցուցանիշի շարժընթացը առավելապես պայմանավորված է նախորդ տարվա տնտեսական անկման դինամիկայով: Այսպես, 2020թ. տարեսկզբի բարձր ակտիվության համեմատ, 2021թ. սկզբում գրանցվել է տնտեսական ակտիվության անկում, սակայն, 2020թ. հետագա ամիսների խոր անկումները հիմք կհանդիսանան տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ-ի) արագացման համար:

Վերոհիշյալն արդեն իսկ նկատելի է 2021թ. հունվար-մարտ ամիսների \ցուցանիշներում: Մարտ ամսվա տնտեսական ակտիվությունը նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 3.8%-ով՝ փետրվարին գրանցված 6.3% անկման դիմաց, ինչի արդյունքում, հունվար-մարտ ամիսների կուտակային ՏԱՑ-ը կազմել է -2.0%՝ հունվար-փետրվար ամիսների անկման համեմատ մեղմվելով 5.3 տոկոսային կետով: Գրեթե բոլոր ոլորտներում մարտ ամսին գրանցվել է տնտեսական ակտիվության աճ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020թ. մարտի կեսերից սկսեցին սահմանվել սահմանափակումներ տնտեսական գործունեության և մարդկանց տեղաշարժի գծով, իսկ մարտի 22-ից սահմանափակումներն ավելի խստացվեցին, մինչդեռ 2021թ. մարտ ամսին այդպիսի սահմանափակումներ չեն եղել:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %




2021թ. հունվար-մարտ ամիսների ՏԱՑ-ի անկումը առավելապես պայմանավորված է առևտրի և ծառայությունների ոլորտների անկմամբ, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար -2.0 և -1.8 տոկոսային կետ:

Բացասական է եղել նաև արդյունաբերության նպաստումը, որը կազմել է -1.0 տոկոսային կետ:

Գյուղատնտեսությունը հունվար-մարտ ամիսներին նվազել է 1.0%-ով, և տնտեսական ակտիվությանը ունեցել է բացասական նպաստում 0.1 տոկոսային կետի չափով:


Նշենք, որ ՏԱՑ-ի նախորդ ամիսների ցուցանիշները << ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 2021թ. հունվարին ՏԱՑ-ի անկման տեմպը նախորդ ամսվա հրապարակված 8.2%-ից դարձել է 8.4%, իսկ հունվար-փետրվար ամիսների անկումը 6.7%-ից նվազել է մինչև 7.3%:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2021թ. հունվար-մարտ ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության աճը մարտ ամսին կազմել է 3.8%: Արդյունաբերության անկման տեմպն ընթացիկ տարվա հունվար-փետրվար ամիսներին դանդաղել է, իսկ մարտին գրանցվել է դրական ցուցանիշ, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսներին արդյունաբերության անկման տեմպը դանդաղել է՝ հասնելով 3.9%-ի:

2021թ. հունվար-փետրվար ամիսների տվյալներով՝ արդյունաբերության անկումը առավելապես պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության 15.7% անկմամբ, որի նպաստումը ընդհանուր արդյունաբերության անկմանը կազմել է 9.7 տոկոսային կետ: Ընդ որում, մշակող արդյունաբերության կազմում կտրուկ անկում են գրանցել «ծխախոտային արտադրատեսակների արտադրություն» (անկումը՝ -41.3%), «հիմնային մետաղների արտադրություն» (անկումը՝ -14.5%) և «ոսկերչական արտադրատեսակների արտադրություն» (անկումը՝ -86.0%) ենթաճյուղերը, որոնց արտադրանքի զգալի մասնաբաժինը արտահանվում է:

Հանքագործական արդյունաբերությունը հունվար-մարտ ամիսներին գրանցել է 3.1% աճ, որի նպաստումն ընդհանուր արդյունաբերությանը կազմել է 0.6 տոկոսային կետ:


«Էլեկտրաէներգիա, գազի և գոլորշու մատակարարում» ենթաճյուղում գրանցվել է 6.5% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 1.1 տոկոսային կետ դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ենթաճյուղում տնտեսական

¹ Արդյունաբերության կառուցվածքը 2021թ. հունվար-մարտ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

ակտիվությունն աճել է 0.3%-ով՝ ընդհանուր արդյունաբերությանն ունենալով աննշան նպաստում:

1.2. Շինարարություն


Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարությունը 2021թ. սկզբից դրսևորում է աճի միտում, որը մարտ ամսին կտրուկ արագացել է: Ընթացիկ տարվա հունվար և փետրվար ամիսներին շինարարության աճը կազմել է համապատասխանաբար 0.8% և 1.1%, իսկ մարտ ամսին շինարարության ծավալների աճի տեմպը կտրուկ արագացել է՝ կազմելով 10.8%, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային աճը ևս արագացել է՝ կազմելով 4.7%:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %




Ծառայությունների ոլորտում նույնպես գրանցվել է աճ՝ նախորդ ամիսների խոր անկումից հետո: Ծառայությունների անկումը հունվար և փետրվար ամիսներին բավական խորն էր, սակայն մարտին, պայմանավորված նախորդ տարվա համեմատ տնտեսական սահմանափակումների բացակայությամբ, գրանցվել է 0.9% աճ: Արդյունքում հունվար-մարտ ամիսների ծառայությունների անկումը մեղմվել է՝ կազմելով 8.1%:

Հունվար-փետրվար ամիսների տվյալներով² ծառայությունների անկումը հիմնականում պայմանավորված է «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (անկումը՝ -34.3%) և «տրանսպորտային ծառայություններ» (անկումը՝ -30.5%) ենթաճյուղերի անկումներով, որոնց նպաստումները ընդհանուր ծառայությունների անկմանը կազմել են համապատասխանաբար 7.8 և 2.8 տոկոսային կետ: Ծառայությունների անկմանը հակազդել է միայն «տեղեկատվություն և կապ» (աճը՝ 11.5%) ենթաճյուղի աճը, որի դրական նպաստման չափը կազմել է 1.6 տոկոսային կետ:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի ոլորտի զարգացումները նույնպես բացատրվում են բազային էֆեկտով: Մարտ ամսին առևտրի ծավալներն աճել են նախորդ տարվա մարտի համեմատ, ինչը սպասելի էր՝ հաշվի առնելով նախորդ տարվա մարտի տնտեսական սահմանափակումները, ինչպես նաև բնակչության զգուշավոր վարքագիծը: Այդ տրամաբանությամբ, ապրիլին առևտրի աճն ավելի կարագանա:


² Ծառայությունների կառուցվածքը 2021թ. հունվար-մարտ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

Հունվար-մարտ ամիսների անկումը ևս մեղմվել է՝ կազմելով -5.6% փետրվարի -10.8% ցուցանիշի դիմաց:

Հարկ է նշել, որ առևտրի ոլորտի նախորդ ամիսների ցուցանիշները ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են, ինչի արդյունքում 2021թ. հունվարին առևտրի անկման տեմպը նախորդ ամսվա հրապարակված 15.1%-ից դարձել է 14.2%, իսկ հունվար-փետրվար ամիսների անկումը 11.3%-ից՝ 10.8%:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճ, %



Արտահանման ծավալների կուտակային ցուցանիշը դուրս է եկել դրական տիրույթ մարտ ամսվա զարգացումների շնորհիվ: 2021թ. մարտին նախորդ տարվա մարտի համեմատ ապրանքների արտահանման ծավալն աճել է 21.7%-ով, ինչի արդյունքում արտահանման կուտակային անկումը դարձել է աճ՝ հունվար-մարտ ամիսներին կազմելով 3.4%:


Հունվար-փետրվար ամիսների տվյալներով³ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորված է «պատրաստի սնունդ» (անկումը՝ -13.9%), «սարքեր և ապարատներ» (անկումը՝ -69.5%) և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (անկումը՝ -35.2%) ապրանքախմբերի անկմամբ, որոնց նպաստումները ընդհանուր արտահանման նվազմանը կազմել են համապատասխանաբար 3.2, 2.3 և 5.4 տոկոսային կետ:

Արտահանման ցուցանիշները ևս վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից, ինչի արդյունքում 2021թ. հունվարին արտահանման անկման տեմպը նախորդ ամսվա

³ Արտահանման կառուցվածքը 2021թ. հունվար-մարտ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:

հրապարակված 9.5%-ից դարձել է 9.3%, իսկ հունվար-փետրվար ամիսների անկումը 5.5%-ից դարձել է 5.3%:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճ, %



Ներմուծման ծավալները նույնպես աճել են մարտ ամսին, սակայն կուտակային աճի տեմպը դեռևս մնացել է բացասական տիրույթում: 2021թ. մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ներմուծման ծավալներն աճել են 5.0%-ով, ինչի արդյունքում հունվար-մարտ ամիսների կուտակային անկման տեմպը մեղմվել է 6.9 տոկոսային կետով՝ դառնալով -8.7%:

2021թ. հունվար-փետրվար ամիսների տվյալներով⁴ ներմուծման անկումը պայմանավորված է գրեթե բոլոր ապրանքատեսակների ներմուծման ծավալների անկմամբ: Սակայն, առավել նշանակալի են եղել «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ», «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մանածագործական իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալների նվազումները, որոնց նպաստումներն ընդհանուր ներմուծման կրճատմանը կազմել են համապատասխանաբար 3.1, 2.1 և 1.6 տոկոսային կետ:

ՀՀ ՎԿ կողմից վերանայվել են նախորդ ամիսների ներմուծման ցուցանիշները, ինչի արդյունքում 2021թ. հունվար-փետրվար ամիսների ներմուծման անկումը 15.8%-ից դարձել է 15.6%:



⁴ Ներմուծման կառուցվածքը 2021թ. հունվար-մարտ ամիսների համար դեռևս չի հրապարակվել:


3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից դադարեցվել է հաշվետու ամսվա աշխատավարձերի ցուցանիշի հրապարակումը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նախկինում (2020թ. ապրիլից սկսած) ՀՀ ՎԿ-ն հրապարակում էր աշխատավարձերի գնահատական, որը նշանակալիորեն տարբերվում էր ՊԵԿ-ից ստացվող հետագա փաստացի տվյալների հիման վրա հաշվարկված ցուցանիշներից: Հետևաբար ՀՀ ՎԿ-ն այլևս հաշվետու ամսվա աշխատավարձերի գնահատական չի հրապարակի: Ըստ այդմ՝ աշխատավարձերի ցուցանիշները կհաշվարկվեն և կհրապարակվեն բացառապես ՀՀ ՊԵԿ-ից հաշվետու ամսվան հաջորդող 25-րդ կամ 26-րդ օրը ստացվող տվյալների բազայի հիման վրա և կգետնեղվեն ՀՀ ՎԿ կողմից հրապարակվող ընթացիկ օպերատիվ տվյալների աղյուսակում՝ ամսվա վերջին աշխատանքային օրը:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 9. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը, % (աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում)





2021 թվականի հունվար-մարտ ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքը շարունակել է արժեզրկվել՝ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ, և արժևորվել Ռ-Դ ռուբլու նկատմամբ: Հունվար-մարտ ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ փոքր-ինչ դանդաղել է՝ կազմելով համապատասխանաբար 8.0% և 15.8%, իսկ Ռ-Դ ռուբլու նկատմամբ նույն ժամանակահատվածում դանդաղել է ՀՀ դրամի արժևորման տեմպը՝ կազմելով 3.3%:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ⁵

5.1. Բյուջեի եկամուտները


2021թ. մարտին պետական բյուջեի եկամուտների նվազման տեմպը շարունակել է դանդաղել: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2021թ. հունվար-մարտին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 5.7%-ով՝ կազմելով 349.3 մլրդ դրամ: Հարկային եկամուտների անկումը կազմել է 4.6%՝ նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ մեղմվելով 4.1 տոկոսային կետով: Չնայած նվազմանը, հարկային եկամուտները մոտ 22.3 մլրդ դրամով կամ շուրջ 7.1%-ով գերակատարվել են առաջին եռամսյակի ճշտված⁶ պլանի նկատմամբ:

Բյուջեի այլ եկամուտները նույն ժամանակահատվածում նվազել են 22.1%-ով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 31.6%-ով:

⁵ Պետական բյուջեի ցուցանիշների աճերի հաշվարկն իրականացվել է դրանց «հազար դրամներով» արտահայտված ցուցանիշների կիրառմամբ: Գծապատկերներում ներկայացված «մլրդ դրամ» արտահայտությամբ ցուցանիշների կիրառման դեպքում աճի ցուցանիշները կարող են փոքր-ինչ տարբեր լինել:

⁶ Ճշտված պլանը իրենից ներկայացնում է բյուջեի եռամսյակային պլանը՝ ճշտված միայն դրոշմանիշային վճարներով: Առաջին եռամսյակի ամբողջական ճշտված պլանը հասանելի կլինի 2021թ. առաջին եռամսյակում բյուջեի կատարման հաշվետվության հրապարակման ժամանակ:

Գծապատկեր 10. Հարկային եկամուտների կուտակային աճը, %




Հարկային եկամուտների նվազումը հունվար-մարտ ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի (նվազումը՝ 35.9%), ակցիզային հարկի (նվազումը՝ 32.0%) և ԱԱՀ-ի (նվազումը՝ 2.2%) գծով մուտքերի անկումներով, որոնց նպաստումն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել է համապատասխանաբար 3.9, 2.5 և 0.8 տոկոսային կետ:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2020թ. հունվար-մարտ		2021թ. հունվար-մարտ	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	16.5	16.5	-4.6	-4.6
ԱԱՀ	8.3	3.1	-2.2	-0.8
Շահութահարկ	94.3	6.1	-35.9	-3.9
Եկամտային հարկ	14.3	4.6	-0.5	-0.2
Ակցիզային հարկ	16.3	1.3	-32.0	-2.5
Շրջանառության հարկ	20.3	0.5	-13.9	-0.4
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	13.2	0.3	38.8	0.9
Մաքսատուրք	-10.0	-0.6	16.4	0.8
Սոցիալական վճար	22.3	0.4	72.4	1.2
Այլ հարկային եկամուտներ	47.8	0.6	52.8	0.9
Պետական տուրք	22.7	0.6	-26.2	-0.7

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 11. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ




Պետական բյուջեի ծախսերը զգալիորեն աճել են: 2021թ. հունվար-մարտ ամիսներին ՀՀ պետական բյուջեից իրականացվել է 404.9 մլրդ դրամի ծախս, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կատարված ծախսերի նկատմամբ ավելի է 21.9%-ով:

Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ ծախսերի 12.8%, այնպես էլ կապիտալ ծախսերի մոտ 3 անգամ աճով: Ընդ որում, հարկ է նկատել, որ կապիտալ ծախսերի ծավալը աճել է բավական կտրուկ՝ միայն մարտ ամսին կատարվել է մոտ 41 մլրդ դրամի կապիտալ ծախս, այն դեպքում, երբ հունվար-փետրվար ամիսների կապիտալ ծախսերի ծավալը կազմել էր 8.1 մլրդ դրամ: Դա նշանակում է, որ կապիտալ ծախսերի կազմում արտացոլված մեծ գումարը հնարավոր է ուղղված լինի ռազմական ծախսերին, այսինքն ազդեցություն ունեցած չլինի տնտեսական ներուժի վրա: Դրանց վերաբերյալ առավել մանրամասն հնարավոր կլինի վերլուծել 2021թ. առաջին եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հրապարակումից հետո:

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), ժամանակահատվածի վերջի դրությամբ, մլրդ դրամ




Պետական բյուջեն 2021թ. առաջին եռամսյակում եղել է պակասուրդային: 2021թ. հունվար-մարտ ամիսներին պետական բյուջեի ծախսերը գերազանցել են եկամուտներին, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ՝ 55.6 մլրդ դրամի չափով:

5.4. Պետական պարտք

2021թ. մարտի վերջի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 8,652.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա մարտի նկատմամբ աճելով 18.7%-ով: Միևնույն ժամանակ, դրամով արտահայտված պետական պարտքն աճել է 25.8%-ով՝ հասնելով 4,591.6 մլրդ դրամի:

Կառավարության պարտքը նույն ժամանակահատվածում նույնպես զգալիորեն աճել է՝ դոլարային արտահայտությամբ 20.2%-ով, իսկ դրամային արտահայտությամբ 27.4%-ով: **Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020թ. վերջի դրությամբ գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը՝ կազմելով 63.5%, իսկ 2021 թվականին, ըստ տարբեր հաշվարկների՝ այն կմոտենա 70% շեմին (մարտի վերջի դրությամբ այն արդեն իսկ հասել է 2020թ. ՀՆԱ-ի 70%-ին):** Այս դինամիկան ցույց է տալիս, որ հարկաբյուջետային կայունության տեսանկյունից արդեն իսկ գոյացել են ռիսկեր, որոնց կառավարումը և չեզոքացումը պետք է լինի կառավարության ուշադրության կենտրոնում:


Գծապատկեր 13. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ


Գծապատկեր 14. 12-ամսյա գնաճ, %



Գնաճը շարունակում է արագանալ: 12-ամսյա գնաճը ընթացիկ տարվա մարտին հասել է 5.8%-ի, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2015-ից հետո: Գնաճը հիմնականում պայմանավորված է ՀՀ դրամի արժեզրկմամբ, ինչպես նաև արտաքին աշխարհում պարենային ապրանքների գների աճով:


6.2. Ավանդներ և վարկեր

Գծապատկեր 15. Ավանդների 12-ամսյա աճը, %



2021թ. մարտին առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդների ծավալների աճը փոքր-ինչ արագացել է: Ավանդների աճի դանդաղման միտումը սկսվել է 2020 թվականի վերջից, իսկ 2021 թվականի սկզբից սկսած պահպանվում է ավանդների բավական ցածր աճը: Մարտի վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ ավանդների ծավալն աճել է 4.9%-ով՝ նախորդ տարվա համապատասխան 18.5% ցուցանիշի դիմաց:

Գծապատկեր 16. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ




2021թ. մարտին ավանդների աճը հիմնականում պայմանավորված է եղել ձեռնարկությունների ավանդների աճով, որի նպաստումը կազմել է 4.8 տոկոսային


կետ: Ոչ ռեզիդենտներից ներգրավվող ավանդների ծավալի նվազման տեմպն արագացել է՝ հասնելով 8.1%-ի, իսկ բացասական նպաստումը ընդհանուր ավանդների աճին կազմել է 2.3%: Ինչպես նշել ենք նախորդ վերլուծություններում, նշված գործոնները տնտեսությունում անորոշությունների և անկայունության բարձր աստիճանի արտացոլումն են, ինչն արտահայտվում է ձեռնարկությունների կողմից ներդրումային գործունեության սառեցման (ազատ միջոցները ներդրվում են բանկերում տնտեսության իրական հատվածում ներդնելու փոխարեն) և ՀՀ տնտեսությունից ֆինանսական ռեսուրսների դուրսբերման միջոցով:

Վարկերի աճի տեմպը դանդաղում է: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) աճը 2021 թվականի մարտին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ շարունակել է դանդաղել՝ կազմելով 9.0%:

Գծապատկեր 17. Վարկերի 12-ամսյա աճը, %



Գծապատկեր 18. Տնտեսության ճյուղերի նպաստումները վարկերի աճին, տոկոսային կետ




Վարկերի աճին հիմնականում նպաստել են հիպոթեքային, արդյունաբերության և ծառայությունների ոլորտներին տրամադրվող վարկերի ծավալների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4, 2.8 և 2.6 տոկոսային կետ: Վարկերի աճին հակազդել են սպառողական և այլ ճյուղերին տրամադրվող վարկերի ծավալների նվազումը, որոնց բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 1.0 և 2.1 տոկոսային կետ:

7. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Համաճարակային իրավիճակը կրկին վատթարացել է, COVID-19-ի երրորդ ալիքն ուժգնացել է: 2021թ. մարտին համավարակի նոր գրանցված դեպքերի միջին օրական ցուցանիշը սկսել է աճել՝ հասնելով 664 դեպքի, իսկ մահվան միջին օրական դեպքերը հասել են 10-ի: Ապրիլին իրավիճակն ավելի է վատթարացել. միջին օրական նոր վարակման դեպքերը հասել են 801-ի, իսկ մահվան դեպքերը՝ 20-ի:

Մեկ միլիոն բնակչության հաշվով գրանցված դեպքերի թվով Հայաստանը շարունակում է զբաղեցնել աշխարհում 33-րդ տեղը, իսկ մահվան դեպքերի թվով՝ 31-րդը՝ նախորդ ամսվա 35-րդի փոխարեն:

Գծապատկեր 19. Կորոնավիրուսի վարակման և մահացության միջին օրական դեպքերը Հայաստանում



* 2021թ. ապրիլի 26-ի դրությամբ

8. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Ինչպես և սպասվում էր, ընթացիկ տարվա զարգացումները առավելապես բացատրվում են բազային էֆեկտով: 2021թ. հունվարին գրեթե բոլոր ցուցանիշների գծով գրանցվել է խոր անկում, ինչը փոքր-ինչ մեղմվել է փետրվարին: Մարտ ամսից արդեն նկատվում է աճի միտում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020թ. մարտից արդեն սկսվել էր տնտեսական անկումը: Հետևաբար, նույն տրամաբանությամբ, 2020թ. ապրիլի խոր անկման համեմատ 2021 թվականի նույն ժամանակահատվածում կգրանցվի բարձր աճ: Սակայն սա դեռևս չի նշանակում, որ տնտեսությունն արդեն վերականգնվել է, այն միայն տնտեսական ճգնաժամից հետո որոշակի աշխուժացման արտացոլանքն է: Իսկ իրական վերականգնման և աճի արագացման համար անհրաժեշտ են տնտեսական քաղաքականության հստակ և արդյունավետ միջոցառումներ, որոնք, սակայն, տեսանելի չեն:

2. Կառավարության պարտքը շարունակում է աճի միտումը, ինչը մեծացնում է հարկաբյուջետային կայունությանը սպառնացող ռիսկերը: 2020թ. փաստացի տվյալներով կառավարության պարտքը գերազանցել է ՀՆԱ-ի 60%-ը, իսկ 2021թ. մարտի վերջի դրությամբ այն արդեն իսկ գերազանցել է 2020թ. ՀՆԱ-ի 70%-ը: Դա նշանակում է, որ կառավարության պարտքն արդեն հասել է ռիսկային մակարդակի: Հետևաբար, պարտք/ՀՆԱ-ի նվազեցումը պետք է դառնա կառավարության մակրոտնտեսական քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Սակայն, հաշվի առնելով այն, որ կառավարությունը վերջին տարիներին ստանձնել է պերմանենտ ընթացիկ ծախսեր իրականացնելու պարտավորություններ, որոնք ստիպված իրականացնում

է պարտքի հաշվին, պարտք/ՀՆԱ-ի նվազեցումը կպահանջի լրացուցիչ ջանքեր, և կառավարությունը ստիպված կլինի իրականացնել «ոչ պոպուլյար» քայլեր: Միաժամանակ, դրանց չիրականացումը կհանգեցնի ավելի բարդ խնդիրների, որոնց լուծումն ավելի «ցավոտ» կլինի բնակչության համար:

3. Համաճարակային իրավիճակը կրկին սկսել է վատթարանալ: 2021թ. մարտ և ապրիլ ամիսներին COVID-19-ի վարակման, ինչպես նաև մահվան դեպքերը կտրուկ աճել են նախորդ ամիսների համեմատ, ինչը նշանակում է, որ ուժգնացել է համավարակի երրորդ ալիքը: Հարկ է նկատել, որ մահացության դեպքերը, վարակման դեպքերի համեմատ, զգալիորեն ավելի շատ են, քան նախորդ ալիքների դեպքում, ինչը նշանակում է, որ իրավիճակն ավելի է վատթարացել: Հետևաբար, տնտեսական, սոցիալական և ֆինանսական խոր հետևանքներով լի նոր ցնցումներից պաշտպանվելու նպատակով կառավարությունն ավելի մեծ ջանքեր պետք է ներդնի իրավիճակի կայունացման և առողջապահական ճգնաժամի հաղթահարման համար: Մասնավորապես, անհրաժեշտ է հնարավորինս արագ սկսել պատվաստումների իրականացումը բնակչության լայն շերտերի (հատկապես ռիսկային խմբերի) համար՝ օգտագործելով հանրության համար ընդունելի և վստահելի պատվաստանյութեր:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից բաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: